





ՇՆՈՐՅԱՆԻՆ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԲԱԽԻԶԵ. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԵՎ ԲԱՐՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ Է, ՄԱՅԱԾ ԱՄԵՆ ԻՆՉ ՄԵՐ ԶԵՌՔՈՒՄ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

Իրակլի Կորբախիձեն մասնավորապես անդրադարձավ տնտեսության ոլորտում իրակա-նացված բարեփոխումներին:

- Մեր կանխատեսմամբ եւ առկա ծրագրե-րով առաջնորդվելով, վստահաբար կարող ենք ասել, որ մինչեւ 2028 թվականը տնտեսությու-նը կաճի մինչեւ 130 միլիարդ լարի: Դրա հիմ-նական նախապայմանը խաղաղության պահ-պանումն է, մնացած ամեն ինչ մեր ձեռքում է, եւ մենք անպայման կկարողանանք հասնել այս արդյունքին: Բոլորս գիտենք, որ բնակչության սոցիալական վիճակը բարելավվում է փողի զնոդունակությամբ պայմանավորված տնտեսական աճի հիման վրա: Իսկ ինչպիսի՞ն է մարդու սո-ցիալական վիճակը այս կամ այն երկրում: Կոնկրետ մեզ մոտ շատ ծանր իրավիճակ էր: Մեր տնտեսությունը դուրսով գնողունակու-թյամբ 2012-ին մոտ 10 000 դոլար էր՝ 10 040 դոլարից մի քիչ ավելի: Այս ցուցանիշով մենք աշխարհում 109-րդն էինք, տնտեսական տե-սակետից շատ ծանր վիճակ էր: Եվ հիա այսօր մենք արդեն հատել ենք 25 000 դոլարի գնո-ղունակությունը եւ որպես այդպիսին զարգաց-րել ենք տնտեսությունն ու արագ տնտեսական աճ ենք գրանցել այլ երկրների համեմատ: Ինչպես տե-սում ենք, մենք 109-րդ տեղից տեղափոխվել ենք 77-րդ տեղ: Ինչ վերաբերում է 2028-ին, ապա կանխատեսում ենք, որ մեկ շնչի հաշվով տնտեսությունը կգերազանցի 36 հազար դոլարը՝ հաշվի առնելով գնողունակությու-նը: Այս դեպքում արդեն կհայտնվենք 66-րդ հորիզոնա-կանում: Սա նշանակում է, որ այլ երկրների համեմատ, մենք այս դեպքում եւս կունենանք ավելի արագ աճ,- մասնավորապես նու իրավիճակ, որ 2028 թվականին «Վրացական երազանքը» առաջադրել է «Հավակնոտ խնդիր» եւ ծրագրում է երկրի բյուջեն հասցնել ավելի քան 50 միլիարդ լարիի:

- Այսօրվա դրությամբ, 2022 թվականին կիսով չափ կրճատեցինք գործազրկությունը,- հայտարարեց Իրակ-լի Կորբախիձեն եւ հավելեց, որ «Հավակնոտ ու բա-ցարձակապես իրատեսական խնդիր է» գործազրկու-թյան մակարդակը նվազեցնել մինչեւ 4 տոկոս, ինչը «Եվրոպական միջին ցուցանիշից քիչ է,- հայտարա-րեց վարչապետը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

«Վրացական երազանքի» նախընտրական ծրագրի շնորհանդեսին Իրակլի Կորբախիձեն անդրադարձավ նա-եւ ճանապարհային ենթակառուցների նախագծերին:

Հաջորդ տարի թեթևաբեռի Բաթումի կրթական քառա-գոտի ավտոմայրուղի: Ներկա դրությամբ, մնացել է այդ մայրուղու փոքր ճանապարհահատվածի՝ Քոբուլեթի տա-նող ճանապարհի շինարարությունը: Կսկսվի Բաթումի-Սարփի ճանապարհահատվածի շինարարությունը: Հաշ-վի առնելով նաեւ այն, որ կգործարկվի Անակլիայի նա-վահանգիստը, դրա համար եւս կպահանջվի նոր ճանա-պարհ մինչեւ Անակլիա,- հայտարարեց վարչապետն ու հավելեց, որ ինչ վերաբերում է Արեւելյան Վրաստանին, ապա այստեղ ծրագրվում է ավարտին հասցնել Հայաս-տանի եւ Ադրբեջանի սահման տանող ճանապարհների կարգավորումը: Արդեն ավարտվել է Թբիլիսի-Սագարե-ջո քառագոտի ավտոմայրուղու շինարարությունը, սկս-վել է Լազոդեթի տանող ճանապարհի շինարարությու-նը, ավարտին է մոտենում Թբիլիսի-Ռուսթավի քառագո-տի մայրուղու շինարարությունը:

Ինչպես հայտարարեց վարչապետը, Անակլիայի խորջը-յա նավահանգիստն արդեն ի վիճակի կլինի 2029 թվա-կանին ընդունել նավեր: Ըստ վարչապետի, 2029 թվա-կանին նավահանգիստը կկարողանա ընդունել 600 հա-զար կոնտեյներ, եւ նավահանգստի լիարժեք գործարկ-ման համար առաջին փուլում կպահանջվի 600 միլիոն դոլարի ներդրում:

Իրակլի Կորբախիձեն նշեց նաեւ, որ ծրագրվում է նոր օդանավակայանի շինարարություն Վազիանիում, որը կկարողանա ընդունել 18 միլիոն ուղևորի:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Վրացական երազանքի» նախընտրական ծրագրում առանձնակի ուշադրություն է հատկացվում գյուղատն-տեսության զարգացմանը, եւ այդ նպատակով առաջի-կա չորս տարիների ընթացքում ծրագրված է ոլորտի զարգացման համար ներդնել 3 միլիարդ լարի:

- Շատ մեկնաբանությունների հանգեցրեց Բիծինա Իվանիշվիլու խոստումը, որ 1 միլիարդ կներդրվի գյու-ղի վերածննդի համար: Հիմա խոսքն արդեն 1 միլիար-



դի մասին չէ, տարիների ընթացքում բազում միլիարդ-ներ օգտագործվեցին գյուղի վերածննդի համար, եւ դրանից հետո առաջիկա չորս տարիների համար լրա-ցուցիչ կծախսվի եւս 3 միլիարդ լարի,- հայտարարեց Իրակլի Կորբախիձեն:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Անդրադառնալով այս ոլորտին՝ Իրակլի Կորբախիձեն հայտարարեց, որ ծրագրել են հավակնոտ նպատակ, որպեսզի 2030 թվականին Վրաստանը էներգետիկայի առումով դառնա ինքնաբավ եւ անկախ երկիր: Վարչա-պետի խոսքով, վերջին 12 տարիների ընթացքում երկ-րում կառուցվել է 63 ՀԷԿ, 2 ջերմաէլեկտրակայան եւ մեկ հողմաէլեկտրակայան:

- 2012 թվականին երկրում գեներացիայի հզորությու-նը կազմում էր 3 359 մեգավատտ, 2024 թվականին այն հասցվեց 4600-ի, իսկ 2028-ի համար ծրագրել ենք, որ այն գերազանցելու է 8 հազար մեգավատտը: Ընդ որում, 2030 թվականին երկրում գեներացվող հզորությունը կհասցվի 10 հազար մեգավատտի,- հավաստիացրեց Իրակլի Կորբախիձեն:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՉԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Իրակլի Կորբախիձեն հայտարարել է նաեւ, որ ընտ-րություններում կուսակցության հաղթանակի դեպքում, ծրագրված է ավելացնել մանկապարտեզների, ինչպես նաեւ արհեստանոցների ու մարզադպրոցների անձնա-կազմի աշխատավարձը:

- Վերջին տարիներին ապահովվեց աշխատավարձի 10 տոկոս աճ, իսկ հաջորդ տարի աշխատավարձի ավե-լացման միտումը կշարունակվի: Սովորական ավելացու-մից բացի, հաջորդ տարվա հունվարի 1-ից ծրագրված է մանկապարտեզի աշխատակիցների աշխատավարձը ավելացնել 100 լարիով: Նույնը վերաբերում է նաեւ ար-հեստանոցների եւ մարզադպրոցների աշխատակազ-մին,- հայտարարեց վարչապետը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախընտրական ծրագրի շնորհանդեսին, Իրակլի Կո-րբախիձեն կրկին ընդգծեց կրթության ոլորտի առաջնա-հերթությունը՝ նշելով, որ կշարունակեն նոր կրթօջախ-ների շինարարության, գործող դպրոցների վերանորոգ-ման, ուսուցիչների աշխատավարձի բարձրացման ծրագ-րերը: Առանձնակի ուշադրություն կհատկացվի նաեւ բարձրագույն ուսումնական հաստատություններին, ընդ-որում, ինչպես նշեց վարչապետը, ծրագրված է Թբիլի-սիի եւ Ռուսթավի միջեւ կառուցել Թբիլիսիի պետական համալսարանի նոր համալիր:

ՄՇԱԿՈՒՅՑ ԵՎ ՄՊՈՐՏ

Առաջիկա ընտրություններին «Վրացական երազան-քի» հաղթանակի դեպքում, արվեստագետների եւ ար-վեստի աջակցության համար պետական բյուջեից կհատ-կացվի 30 միլիոն լարի: Կավելացվի նաեւ մարզական ոլորտի ֆինանսավորումը եւ դրա ենթակառուցների զարգացման համար կծախսվի շուրջ 2 միլիարդ լարի:

- Թբիլիսիի ներկայիս մարզադաշտը նախատեսված է 70 հազար հանդիսատեսի համար: Որպեսզի մեզ մոտ անցկացվի 2028 թվականի Եվրոպայի չեմպիոնների լի-գայի մրցաշարը, հարկավոր է մարզադաշտը նորացնել:

Կկառուցվի նոր խաղադաշտ, ընդ որում՝ այն կհարմա-րեցվի ինչպես ֆուտբոլի, այնպես էլ՝ ռեգբիի մարզաձե-լի համար, այնտեղ կանցկացվեն նաեւ համերգներ,- հայ-տարարեց Իրակլի Կորբախիձեն:

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտարարեց Իրակլի Կորբախիձեն, կուսակ-ցության նախընտրական ծրագրում առանձնակի ընդգծ-ված է հանրապետական նոր հիվանդանոցի շինարա-րությունը: Ինչ վերաբերում է սոցիալական ոլորտին, ապա Վրաստանի վարչապետի հավաստմամբ, երկրի տնտեսական երկնիչ աճը թույլ է տալիս առաջիկայում մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների կենսա-թոշակը հասցնել 350, իսկ 70-ն անց կենսաթոշակա-ռուներինը՝ 450 լարիի:

ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրակլի Կորբախիձեի հավաստմամբ, «Վրացական երազանքի» նախընտրական ծրագրում առանձնակի տեղ է հատկացված երկրի պաշտպանունակության բարձրացմանը: Նրա խոսքով, լուրջ ներդրում է իրա-կանացվել ռազմական արդյունաբերության զարգաց-ման, զինված ուժերի նյութատեխնիկական բազայի նո-րացման համար:

Առանձնակի ուշադրություն կհատկացվի զինծառա-յողների սոցիալական իրավիճակի բարելավմանը: Ծրագրվում է կառուցել «Ձինվորական քաղաք», որ-տեղ հազարից ավելի զինծառայող կկարողանա նշել բնակարանամուտը:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնելով «Վրացական երազանք» կուսակցու-թյան նախընտրական ծրագիրը՝ վարչապետ Իրակլի Կո-րբախիձեն ընդգծեց, որ առաջնային խնդիրներից մեկը ԱՄՆ-ի եւ Եվրամիության հետ հարաբերությունների բեռ-նաթափումն է, Ռուսաստանի հետ պրագմատիկ քաղա-քականության եւ դիմակայությունների խաղաղ կարգա-վորման ուղղությունը:

- Բնականաբար, մեզ դուր չի գալիս հարաբերություն-ների այն իրավիճակը, որն այսօր հաստատված է ԱՄՆ-ի եւ Եվրամիության հետ: Համոզված ենք, որ հաջորդ տարվանից, երբ Ուկրաինայում պատերազմը կավարտ-վի, կկատարվեն համապատասխան քայլեր, ինչը կա-պահովի հարաբերությունների կարգավորմանը:

Եվրախնտեզրում մեր արտաքին առաջնահերթու-թյունն է: 2030 թվականին Վրաստանը թեկնածու երկր-ների թվում ամենապատրաստվածը կլինի անդամակ-ցության համար: 2028 թվականի համար ծրագրել ենք կատարել ասոցիացման համաձայնագրով նախատես-ված պարտավորությունների ավելի քան 90 տոկոսը:

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության խորացումը կա-րելուհարգույն առաջնահերթություն է: Նշանակալից է նաեւ Չինաստանի հետ ռազմավարական գործընկե-րությունը, ինչպես տնտեսական, այնպես էլ՝ քաղաքա-կան տեսանկյունից:

Ռուսաստանի հետ իրատեսական քաղաքականու-թյունը, հակամարտության խաղաղ կարգավորումը եւս մեր արտաքին քաղաքական առաջնահերթություններից է,- հայտարարեց Իրակլի Կորբախիձեն:



Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

«ԹԲԻԼԻՍՈՒԴ - 2024»

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՆՇԵՑ ԻՐ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ուր ներկայացվեցին ժամանցային եւ երաժշտական միջոցառումներ՝ նվիրված «Թբիլիսոբային»։ Անցկացվեցին նաեւ գաստրոնոմիական փառատոներ, ցուցահանդես-վաճառքներ, մանկական միջոցառումներ։

«Թբիլիսոբային» մայրաքաղաքի ամենահին թաղամասերից մեկում՝ Աբանոթուբանիում, այլ ազգային փոքրամասնությունների տաղավարների թվում ներկայացվեց նաեւ հայկական տաղավարը, որն այս տարի կազմակերպել էր «Վրացահայերի միությունը», որտեղ հյուրերին հյուրընկալում էր կազմակերպության ղեկավար Մարի Առաքելյանը։ Հայկական տաղավարում ներկայացված էին հայկական մշակութային տարրեր, թբիլիսցի նկարիչ Թենգիզ Միկոյանցի աշխատանքները։

Թբիլիսցիներին եւ մայրաքաղաքի հյուրերին տոնի առթիվ շնորհավորեցին եւ տոնական միջոցառումներին իրենց ընտանիքի անդամների հետ ակտիվ մասնակցություն ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլին, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Վրաստանի կառավարության անդամներն ու խորհրդարանի պատգամավորները։

Տոնական միջոցառումները եզրափակվեցին Պետական հանդիսությունների պալատում, որտեղ անցկացվեց Թբիլիսիի պատվավոր քաղաքացիների պարգևատրման արարողությունը։

Այս տարի Թբիլիսիի պատվավոր քա-



Վիլի Սանյուլը եւ Կախա Կալաձեն

ղաքացի կոչում են ստացել **Զուրաբ Կախարիշվիլին** (բժիշկ, պրոֆեսոր, միջազգային կարգի մրցավար, Վրաստանի ազգային օլիմպիական հավաքականի թիմերի գլխավոր բժիշկ), **Մերաբ Կիլաձեն** (բժիշկ, պրոֆեսոր), **Գիորգի ճուճբուրիձեն** (բժիշկ, Վրաստանի ռեզերվ ազգային հավաքականի գլխավոր բժիշկ), **Դիմիտրի Բազերաշվիլին** (բժիշկ, պրոֆեսոր), **Գիգո Գաբեսկիրիան** (ռեժիսոր), **Գվանջի Մանիան** (աշխարհագրագետ, լրագրող, գիտնական, Թբիլիսիի տոնի սահմանման նախաձեռնողներից), **Բիծինա Սոնոլուաշվիլին** (հիմնադրող), **Նաթելա Վասաձեն** (բանասեր, պրոֆեսոր), **Գելա Փարչուկիձեն** (դիրիժոր), **Նելի Սալաձեն** (մարզուհի, մարզիչ), **Սզիա Ափրիդոնիձեն** (երաժիշտ, նկարիչ), **Գուրան Բաթիաշվիլին** (գրող, դրա-

մատուր, թարգմանիչ), **Կախա Քորիձեն** (ճարտարապետ, դերասան), **Գոգի Մարգվելաշվիլին** (ռեժիսոր), **Թամազ Գողերձիշվիլին** (գրող, դրամատուրգ, թարգմանիչ), **Նելի Կոբիաշվիլին** (լրագրող, հրապարակախոս), **Գիվի Սիխարուլիձեն** (դերասան, գրող, պարող, մարզիչ), **Վախթանգ Ցուխիշվիլին** (ճարտարապետ), **Զուրաբ Դիլիշիձեն** (դերասան), **Գուրան Կալաձեն** (երկրաբան), **Նելլի Բերախան** (դերասանուհի, նկարիչ); **Թենգիզ Գաբեշիլաձեն** (մանկավարժ, լրագրող), **Թեմուրազ Լեժավան** (կենսաբանական գիտությունների դոկտոր, լրիվ պրոֆեսոր, Վրաստանում զենետիկայի ինստիտուտի հիմնադիր), **Օլեսիա Թավաձեն** (նկարչուհի), **Վիլի Սանյուլը** (ֆուտբոլիստ. Վրաստանի հավաքականի մարզիչ)։

Մրցանակաբաշխությանը Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն դիմելով ներկայանալով շնորհավորեց պատվավոր թբիլիսցիներին՝ ընդգծելով վերջիններիս մեծ ավանդը Թբիլիսիի կենսագրականում։

- Թբիլիսին զարդարված է ականավոր մարդկանցով։ Նախ ուզում եմ ի սրտե շնորհակալ լինել բոլորին, դուք ձեր ձեռքբերումներով եւ ամենօրյա աշխատանքով նպաստում եք Թբիլիսիի զարգացմանը։ Իհարկե, միաժամանակ բոլորին մենք չէինք կարողանա շնորհել Թբիլիսիի պատվավոր քաղաքացու կարգավիճակ, չէր ստացվի, բայց խնդրում ենք ընդունեք մեր անկեղծ հարգանքն ու երախտագիտությունը։ - ասաց Կախա Կալաձեն։

«Թբիլիսոբային» տոնակատարության համար այս տարի ծախսվել է 3,5 մլն լարի։ Միջոցառումների կազմակերպման հարցով Թբիլիսիի քաղաքապետարանը դիմել էր Գնումների գործակալությանը։

ՄԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ



ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ՄՍՍԼԵՍԱՔԻ. ՀԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ



Ախալքալաքիի մունիցիպալիտետի ողջ տարածքով ճանապարհային ենթակառուցվածքի կազմակերպումն ընթանում է ինտենսիվ ռեժիմով։

Շարունակվում են մունիցիպալիտետի Դիլիսկա-Չունջխա-Պոտենա գյուղերը կապող ճանապարհի վերականգնման աշխատանքները։

Քաղաքապետ Մելքոն Մակարյանը, փոխքաղաքապետ Թեմուրազ Մճեղիձենի եւ համապատասխան ծառայության ներկայացուցիչների հետ, այցելել է նշված գյուղեր եւ տեղում ծանոթացել ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներին։

Ճանապարհի 5,5 կիլոմետրանոց հատվածում կառուցվում է երկաթբետոնե ծածկ։ Վերականգնողական աշխատանքները կավարտվեն առաջիկա օրերին, եւ գյուղացիները շուտով կկարողանան ազատ տեղաշարժվել։

Ծրագիրը ֆինանսավորվում է մարզերի զարգացման հիմնադրամից եւ տեղական բյուջեից։ Արժեքը կազմում է 2 244 000 լարի։

\* \* \*

Ախալքալաքիի մունիցիպալիտետի Մեծ

Սամսար եւ Տուրքիս գյուղերում կկազմակերպվեն նոր, բազմագործառույթ մինի մարզադաշտեր։

Երկու ծրագրերն էլ ֆինանսավորվում են տեղական բյուջեից, արժեքը կազմում է 124 370 լարի։

Նշենք, որ մարզական ենթակառուցվածքների բարելավման եւ առողջ ապրելակերպի հաստատման նպատակով քաղաքապետ Մելքոն Մակարյանի նախաձեռնությամբ վարչական միավորներում ակտիվ ընթանում են մինի մարզադաշտերի եւ մարզադահլիճների կառուցման աշխատանքները։

ՆԻՆՈՏՄԻՆԴԱ. «ԳՅՈՒՂԻՆ ԱՋԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է

Նինոծմինդայի մունիցիպալիտետում, «Գյուղին աջակցություն» ծրագրի շրջանակներում, ակտիվ իրականացվում են ենթակառուցվածքային աշխատանքներ։

Ընթացքի մեջ են Օռլովկա գյուղի գերեզմանատան ցանկապատման, Գանձա գյուղի կամրջի շինարարական-վերականգնողական, Ջիգրաշեն եւ Խորենիա գյուղերի ջրային համակարգի տեղադրման աշխատանքները։

Նինոծմինդայի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Արմեն Բոդյանը համապատասխան ծառայության ներկայացուցիչների հետ տեղում ծանոթացել է ընթացող աշխատանքներին։

Նինոծմինդայում, ենթակառուցվածքների բարելավման նպատակով պլանգրաֆիկի համաձայն, շարունակաբար

իրականացվում է շինարարական-վերականգնողական աշխատանքներ։

- Գյուղին աջակցություն» ծրագրի շրջանակներում ընթացիկ նախագծերն ընտրվել են հենց բնակչության կողմից գյուղական ժողովների ժամանակ։ Մեզ համար առաջնային է մեր քաղաքացիների բարօրության համար հաշվի առնել նրանց կարիքներն ու պահանջները,- ասաց Արմեն Բոդյանը։

ԲՈՒՆԻՍԻ. ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Բոլնիսիի մունիցիպալիտետի քաղաքապետի պաշտոնակատար Բուբա Գոբեջաշվիլին, քաղաքապետարանի տարածքային կարգավորման եւ ենթակառուցվածքային ծառայության պետ Կոնստանտին Կործածեն ծանոթացել են Բոլնիսիում իրականացվող ենթակառուցվածքային նախագծերի ընթացքին։ Մասնավորապես, քաղաքապետը այցելել է քաղաքի Ռոբաքիձեի փողոցի կարգավորման վայր, որ-



տեղ իրականացվում է փողոցի սալապատումը։ Նախագծի իրականացման համար տարածաշրջանային հիմնադրամից եւ տեղական բյուջեից հատկացվել է 555 հազար լարի։

Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ԱՆՈՒԿՅԱՆԸ

ՎՐԱՍԱՆ - ՌՈՒՍԱՍԱՆ

ՎՐԱՍԱՆԻ ԲԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԱՍԱՐ ԱՆԱՅՆԵՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՇԵՏ ԿԱՊԱՏՍԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՂԱՐԿՎԵԼ ԵՆ

Յուլի 10-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրով, Ռուսաստանը ընդլայնել է Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգը։

Իրավական ակտերի հարթակում իրապարակված բանաձեւի նոր տարբերակն այլեւ չի պարունակում բացառություններ, որոնց համար նախկինում վիզա էր պահանջվում։

Այժմ Վրաստանի քաղաքացիները կկարողանան առանց վիզայի մուտք գործել Ռուսաստանի Դաշնություն կրթություն ստանալու, աշխատանքային գործունեություն ծավալելու կամ Ռուսաստանի տարածքում ավելի քան 90 օր մնալու։

Նախկինում Վրաստանի քաղաքացիների այս խմբերը իրավունք չուներին մուտք գործել Ռուսաստան կամ դուրս գալ Ռուսաստանի Դաշնությունից՝ առանց վիզա ստանալու։

Հրամանագիրն ուժի մեջ է մտնում իրապարակման օրվանից՝ հոկտեմբերի 10-ից, եւ այժմ քաղաքացիների նշված խմբերը կարող են այցելել Ռուսաստան «իրենց ինքնուրույն հաստատող վավեր փաստաթղթերի հիման վրա (Վրաստանի քաղաքացու անձնագիր, դիվանագիտական անձնագիր, ծառայողական անձնագիր, նավաստու գրքույկ, ճամփորդական փաստաթուղթ Վրաստան վերադառնալու համար)։

Հիշեցնենք, որ 2023 թվականի մայիսի 15-ին Պուտինը չեղարկել էր Վրաստանի քաղաքացիների համար 2000 թվականին սահմանված վիզային ռեժիմը։





ԿՐԿԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՍՆԱԿԸ ԲԱՐՁՐԱՉԱՅՆԵՑՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՄՓԻՉՄԵՆԹԻ ՀԱՐՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լումն Ջուրաբիշվիլին ճանաչել է սահմանադրությունը խախտող եւ հաստատել է Վրաստանի սահմանադրության 52-րդ հոդվածով սահմանված կանոնը ենթադրում է, որ նախագահն ունի արտասահմանյան այցի իրավունք միայն Վրաստանի կառավարության համաձայնությամբ:

Գիտեք նաեւ, որ սահմանադրության խախտման փաստը հաստատելուց հետո, Սալոմե Ջուրաբիշվիլին նախագահի պաշտոնը պահպանեց միայն արմատական ընդդիմությունը ներկայացնող խորհրդարանականների աջակցության հաշվին:

Սալոմե Ջուրաբիշվիլին սահմանադրության խախտման հարցում անձեռնմխելիության երաշխիք է ստացել արմատական ընդդիմությունից, իսկ ավելի ուշ, շարունակել է խախտել Վրաստանի սահմանադրությունը: Մասնավորապես, նույնիսկ իմփիչմենթի ընթացակարգի ավարտից հետո, նա մի քանի արտասահմանյան այցեր է կատարել առանց Վրաստանի կառավարության համաձայնության, այդ թվում՝ անցյալ շաբաթ այցելել է Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան եւ Բելգիա:

Նշենք, որ եթե նախքան Սահմանադրական դատարանի որոշումը արտասահմանյան երկրներն ու կազմակերպությունները կարող էին ասել, թե տեղյակ չէին նախագահի այցի համար անհրաժեշտ կառավարության համաձայնությունը, ապա այս որոշումից հետո, Սալոմե Ջուրաբիշվիլին իրենց մոտ ընդունելությունն առանց պարտադիր համաձայնության, վրաց ժողովրդի եւ նրա սահմանադրության հանդեպ անհարգալից վերաբերմունքի հետ մեկտեղ, ներքին գործերին միջամտելու դրսեւորում է եւ հակասում է ընդհանուր եվրոպական արժեքներին:

Մեր սահմանադրությունն այն հիմնարար ակտն է, ուր հստակ արտացոլվում է գտնում վրաց ժողովրդի կամքը, հետեւաբար, դրա կանխամտածված, բացահայտ եւ լկտի խախտումը չի կարող անպատասխան մնալ:

Ուստի, խորհրդարանական մեծամասնությունը որոշում է կայացրել վերսկսել իմփիչմենթի ընթացակարգը եւ պատրաստել սահմանադրական նոր դիմում, որը կներկայացվի Վրաստանի Սահմանադրական դատարան մինչեւ խորհրդարանական ընտրությունները:

Վրաստանի Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրության խախտման հաստատումից հետո, նոր գումարման խորհրդարանը Սալոմե Ջուրաբիշվիլին պաշտոնանկ է անելու իմփիչմենթի միջոցով՝ առնվազն 100 ձայնով առաջին իսկ նիստերում:

Ինչպես գիտեք, Սալոմե Ջուրաբիշվիլին պաշտոնավարման ժամկետը լրանում է այս տարի: Ըստ այդմ, նրան իմփիչմենթ անելով՝ Սալոմե Ջուրաբիշվիլին պաշտոնավարման ժամկետը, պետք է կրճատվի առավելագույնը մեկ ամսով: Ուստի, իմփիչմենթով նրա պաշտոնանկությունը, պաշտոնավարման ժամկետի առումով, մեծ մասամբ խորհրդանշական ծանրաբեռնվածություն ունի, թեւեւ այս որոշման իրավաքաղաքական ծանրաբեռնվածությունը խիստ սկզբունքային է:

Մենք չենք կարող անպատիժ թողնել վրաց ժողովրդի հիմնական օրենքի միտումնավոր, կոպիտ եւ համակարգված խախտումը: Սահմանադրությունը խախտող Սալոմե Ջուրաբիշվիլին պետք է մնա ոչ թե նախկին նախագահ, այլ պաշտոնանկ նախագահ, ինչը, որպես նախադեպ, կարելու կանխարգելիչ դեր կխաղա ապագայում նման կամայականությունները կանխելու եւ վրացական ժողովրդավարության ամրապնդման գործում, - ասել է Շալվա Պապուաշվիլին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԳՆԱՃՈՒՄ ԵՆ ԵՆՈՒՄ ԵՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻՑ ՑԱԾՐ



Վրաստանի Ազգային բանկի հայտարարության համաձայն, գնաճը մնում է նպատակային ցուցանիշից ցածր:

Ազգային բանկի տվյալներով, սեպտեմբերին տարեկան գնաճը, նախորդ ամիսների համեմատ, կրկին նվազել է եւ կազմել 0,6 տոկոս: Օգոստոսի համեմատ, գների ընդհանուր մակարդակն աճել է 0,3 տոկոսով:

Գնաճը նպատակային մակարդակի սահմաններում պահելը մեծապես պայմանավորված է տեղական արտադրության ապրանքների եւ ծառայությունների գնաճի ցածր մակարդակով, ինչն, իր հերթին, վկայում է երկարաժամկետ գնաճային անակնկալների կայունության մասին:

Նախորդ ամիսների համեմատ, ընդհանուր գնաճի նվազմանը լրացուցիչ օժանդակել է ներմուծման գնաճի նվազումը: Հիմնական գնաճը, որը սպառողական զամբյուղից բացառում է խիստ անկայուն սննդամթերքի, էներգակիրների եւ ծխախոտի գները, կազմել է 0,8 տոկոս:

Սեպտեմբերին, նախորդ ամսվա համեմատ, սպառողական զամբյուղի վրա ամենաշատն ազդել են սեզոնային գործոնները: Իմերթական պանրի ամսվա գնաճը ավելացրել է 0,2 տոկոսային կետով, իսկ խնձորի, խաղողի, վարունգի եւ լոլիկի գին նվա-

զումը մոտավորապես նույնքանով նվազեցրել է ամսվա գնաճը: Տարեկան կտրվածքով գնաճն ամենաշատն ազդել է բենզինի վրա: Անցած տարվա սեպտեմբերի համեմատ, բենզինի գներն աճել են միջինը 7,2 տոկոսով, թեւեւ հարկ է նշել, որ նախորդ ամիսների համեմատ, բենզինի ներդրումն ընդհանուր գնաճի մեջ նվազել է: Գնաճի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել ինտերնետի եւ էլեկտրաէներգիայի էժանացումներով՝ համապատասխանաբար՝ 0,4 տոկոսային կետով եւ 0,3 տոկոսային կետով: Պարենային ապրանքների գները 0,8 տոկոսով ցածր են եղել անցյալ տարվա սեպտեմբերի գներից:

Ինչ վերաբերում է տեղական գնաճին, ապա, ինչպես նշվում է Ազգային բանկի հրապարակած փաստաթղթում, ապա այն պահպանվում է ցածր մակարդակի վրա եւ սեպտեմբերին կազմել է 1,2 տոկոս:

«Տեղական գնաճի ցածր մակարդակը պայմանավորված է ծառայությունների գնաճի անկմամբ, մինչդեռ ներմուծվող գնաճի վերջին անկումը հիմնականում արտացոլում է վառելիքի գների բարձրացման հետեւանքով առաջացած բազային էֆեկտի աստիճանական մարումը», - ասվում է Վրաստանի Ազգային բանկի զեկույցում:

ՄԻՍՈՆ ԿԻԼԱՉԵ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՊԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍԱՐՄԱՆԿԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Միջազգային պատժամիջոցների սահմանման առաջին իսկ օրվանից, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունում կազմավորվեց համապատասխան աշխատանքային խումբ, որն իրականացնում է միջազգային պատժամիջոցների կատարման կենտրոնացված վերահսկողություն:

ԱԱՏ-ի, Եվրամիության, Մեծ Բրիտանիայի եւ տնտեսական պատժամիջոցների սահմանման գործընթացին մասնակից մյուս երկրների կողմից սահմանված պատժ-

միջոցների ուղղությամբ, Վրաստանի տարածքում գործող տարանցիկ բոլոր միջանցքները խստորեն վերահսկվում են այն ձեռնաչափով ու ընթացակարգով, որոնք սահ-

մանել են այդ պատժամիջոցները սահմանող մեր միջազգային գործընկերները:

Ներկա դրությամբ, մաքսային վարչակազմում ակտիվ գործում են ռիսկի 37 ուղղությունները, որոնք ավտոմատ կերպով իրականացնում են պատժամիջոցների մասին տվյալների նույնականացումը եւ լրացուցիչ ռիսկ-գործոնների բացահայտումը:

րից վերադարձված եւ մաքսային ընթացակարգերի իրականացումը մերժած 2088 դեպք:

2024 թվականի հունվարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, բացահայտվել է Վրաստանի մաքսային սահմանի պատժամիջոցների շրջանցման 247 դեպք, 2023 թվականին վավերացվել է 852 դեպք:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը մաքսային վերահսկողության ընթացակարգերի շրջանակներում Վրաստանի տարածքով պատժամիջոցների ներքո գտնվող ապրանքների փոխարժեքի կապակցությամբ, սերտ համագործակցում է մշտական կապի մեջ է ԱՄՆ-ի եւ Եվրամիության իրավասու գերատեսչությունների, այլ գործընկեր երկրների հետ եւ պատժամիջոցների կատարման տեսանկյունից իրականացնում է նրանց մշտական իրազեկումը:

ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ ԵՆ ԱՌԱՆՑ ԱԿՑԻՉԻ ԾԽԱԽՈՏՆԵՂՆԻ ՓՈԽԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԵՐ

Ընթացիկ տարվա հուլիսի 1-30-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները, երկրիում անցկացրած ստուգման արդյունքում, բացահայտել են առանց ակցիզի տարբեր տեսակի ծխախոտեղենի պահպանման փոխարժեքի 260 փաստ:

Ստուգման արդյունքում, առգրավվել է առանց ակցիզի ապրանքը, ընդհանուր առմամբ, 38 509 տուփ ծխախոտ, իսկ համապատասխան գործի նյութերը քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքների առկայության պատճառով, փոխանցվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն

Advertisement for 'ՊԱՅՊԱՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ ՈՒ ԱՄԱՌԱՆՈՅԸ' (Mortgage and Rental) with details: 135 ԼԱՐԻՈՎ, 300 ԼԱՐԻ, ԹԵԺ ԳԻԾ: 0125, ԳԵՊԱՐՏԱՍԵՆՏ